

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),
Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի թագավեր ա ըլմ, սա շատ արդար դատ կտրող ա ըլմ, ինչքան դատ ա ըլմ, սրան են կանչմ,
կտրըմ ա: Մրա անմը հասնըմ ա միշ Քրիստոսին:

Քրիստոսը ասըմ ա.— Ես զնալ տես նրա կուշտը, մի հենց բան անիլ տեմ, վեր տենամ վենց ա
կարըմ արդար դատ կտրի:

Չորուն նատըմ ա ու ճամփա ընկնըմ, գնըմ էդ թագավերի կուշտը. մի գեղով անց կենալիս
տենըմ ա մի պառավ կովը կթըմ ա, սա դրա հորթին խաչակնքըմ ա դառձնըմ իշի քուռակ ու
զգըմ ջորու եղնա տանըմ:

Էս պառավը ընգնըմ ա եղնեն ու կանչըմ.— Վարդապետ ջան, ֆերթս տանիլ մի, ֆերթս իսի ես
տանըմ:

Խեխս պառավը շա՞տ ա գիղըմ, թէ սա Քրիստոսն ա, վեր հասնըմ ա եղնեն, կոնիցը փոնըմ ա,
ասըմ ա.— Ի՞նչ ֆերթ, էս իմ քուռակն ա:

Քրիստոսը գալիս ա թագավերի կուշտը, տիենց էլ ջորու վրա, քուռակն էլ եղնեն:

Ասըմ ա.— Թագավերը ապրած կենա, էս վարդապետը ֆերթս վեր ա կալել, տալիս չի:

Թագավերը ասըմ ա.— հի" ես էդ պառավի ֆերթը խլել:

Ասըմ ա.— Էդ իմ ջորու քուռակն ա, պառավի ֆերթը չի:

Թագավերը ձեն չի հանըմ, զլուխը կախ ա անըմ ու տազ անըմ:

Քրիստոսը ասըմ ա.— Հը, ի՞նչ ես մտածըմ, դե կտրի է մեր դատը:

Թագավերը ասըմ ա.— Ես հրմի քու դատի մասին չեմ մտածըմ:

Քրիստոսը ասըմ ա.— Բա ընչի մասին ես մտածըմ:

Ասըմ ա.— Էն մասին եմ մտածըմ, որ Սև ծովիցը ձկները դուրս են եկել էն ըշխարի արտերը
ըրածըմ են, սովը ընգնիլ տի էն ժողովըրդի մեջը, մտածըմ եմ, թէ ի՞նչ անեմ, վեր նրանց
փրկեմ:

Քրիստոսը ասըմ ա.— Բա ձուկը արտը կարածի՝, խի՝ ես տհե բան ասըմ:

Թագավերը ասըմ ա.— Բա ջորուն քուռակ կլի, դու խի՝ ես տհե բան ասըմ:

Քրիստոսը ասըմ ա.— Ախպեր, հալալ ա քեզ:

Նորից խաչակնքըմ ա քուռակին, պոավի հորթը տալիս ա իրան: Ասըմ ա.— Առ, գնա՛: